ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ---- » հոկտեմբերի 2017թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՆԱՐԱ ՍՈՒՐԵՆԻ ՇԼԵՊՉՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2799-րդ տարեդարձի առթիվ, հայկական հեռուստատեսության բնագավառում ներդրած նշանակալի ավանդի, բազմամյա վաստակի և բեղմնավոր գործունեության համար հաղորդավարուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Նարա Սուրենի Շլեպչյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԱՐԱ ՍՈՒՐԵՆԻ ՇԼԵՊՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նարա Սուրենի Շլեպչյանը ծնվել է 1935 թվականի փետրվարի 23-ին, Երևանում:

1957 թվականին ավարտել է Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական ռուսական և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1965 թվականի նոյեմբերի 29-ից՝ Հայաստանի հեռուստատեսության ստուդիայի բացման առաջին օրվանից, աշխատել է որպես հաղորդավար և եղել է Հայաստանի հեռուստատեսության առաջին հաղորդավարը:

1964-1983 թվականներին դասավանդել է Վալերի Բրյուսովի անվան օտար լեզուների և Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտներում՝ որպես ռուսաց լեզվի, ապա՝ խոսքի կուլտուրայի և հաղորդավարի վարպետության դասախոս:

2011 թվականից Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ է:

Հեղինակել և վարել է բազմաթիվ և բազմաբովանդակ ծրագրեր, Հայկական ծրագրերը ներկայացրել է խորհրդային երկրների և արտասահմանյան հեռուստաընկերություններով:

2000-2001 թվականներին վարել է «Մեր էկրանը» հաղորդումը:

2001-2011 թվականներին եղել է Հայաստանի Հանրային հեռուստառադիո-ընկերության խորհրդի հանրության հետ կապերի հասարակական խորհրդի նախագահը:

2011թ. մարտի 19-ին ՀՀ Նախագահի հրամանագրով մրցույթի արդյունքների հիման վրա նշանակվել է Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ:

Պարգևատրվել է մի շարք մեդալներով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Նարա Շլեպչյանի ներդրած ավանդը հայկական հեռուստատեսության բնագավառում, ինչպես նաև բազմամյա վաստակը և բեղմնավոր գործունեությունը՝ առաջարկվում է Նարա Սուրենի Շլեպչյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆԱՐԱ ՍՈՒՐԵՆԻ ՇԼԵՊՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նարա Սուրենի Շլեպչյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆԱՐԱ ՍՈՒՐԵՆԻ ՇԼԵՊՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նարա Սուրենի Շլեպչյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ